

Հայտարարություն

Ծրագրի աշխատանքներում ընտրվելիք անհատ խորհրդատուների

Ճարտարապետական և Շինարարական մասնագիտությունների ուսումնական ծրագրերի արդիականացումը՝ նորագույն տեխնոլոգիաներով հագեցած ուսումնագիտափորձարարական լաբորատորիայի ստեղծմամբ ծրագրի շրջանակներում նոր լաբորատոր աշխատանքների ձևակերպման, փորձարկման և ուսումնական գործընթացում ներդրման նպատակով խորհրդատուների ընտրության մասին

«Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» Հիմնադրամը, Ճարտարապետական և Շինարարական մասնագիտությունների ուսումնական ծրագրերի արդիականացումը՝ նորագույն տեխնոլոգիաներով հագեցած ուսումնագիտափորձարարական լաբորատորիայի ստեղծմամբ ծրագրի շրջանակներում նոր լաբորատոր աշխատանքների ձևակերպման, փորձարկման և ուսումնական գործընթացում ներդրման նպատակով հայտարարում է խորհրդատուների ընտրության մրցույթ: Խորհրդատուները պետք է ձևակերպեն, փորձարկեն և ուսումնական գործընթացում ներդնեն նոր լաբորատոր աշխատանքները: Ընտրված խորհրդատուները պետք է ներկայացնեն ճարտարապետության, շինարարության կամ էկոլոգիայի բնագավառներ: Մասնավորապես, ընտրվելու համար կարող են դիմել՝ կրթության քաղաքականություն մշակողներ, մանկավարժ-դասախոսներ, հոգեբաններ և կրթության ոլորտի այլ մասնագետներ:

Խորհրդատվական ծառայությունները ներառում են հետևյալ աշխատանքները.

- Շինարարական նյութերի ու նրանցից իրականացված շինարարական պատրաստվածքների ֆիզիկամեխանիկական հետազոտությունների մեթոդների ոլորտում համաշխարհային փորձի ուսումնասիրում ու վերլուծություն,
- Ելնելով հանրապետությունում շինանյութերի բնագավառի գործող նորմատիվահրահանգչական փաստաթղթերով սահմանված չափանիշներից և համաշխարհային արդիական առաջավոր փորձից, շինարարական նյութերի համար ֆիզիկամեխանիկական հետազոտությունների արդիական մեթոդների ուսումնագործնական ձեռնարկի մշակում,
- Ելնելով հանրապետությունում շինարարական պատրաստվածքների բնագավառի գործող նորմատիվահրահանգչական փաստաթղթերով սահմանված չափանիշներից և համաշխարհային արդիական առաջավոր փորձից, շինարարական պատրաստվածքների համար ֆիզիկամեխանիկական հետազոտությունների արդիական մեթոդների ուսումնագործնական ձեռնարկի մշակում,
- Շինարարական նյութերի ու նրանցից իրականացված շինարարական պատրաստվածքների ջերմատեխնիկական հետազոտությունների մեթոդների ոլորտում համաշխարհային փորձի ուսումնասիրում ու վերլուծություն,
- Ելնելով հանրապետությունում շինանյութերի ու պատրաստվածքների բնագավառի գործող նորմատիվահրահանգչական փաստաթղթերով սահմանված չափանիշներից և համաշխարհային արդիական առաջավոր փորձից, տարբեր շինարարական նյութերի ու դրանց կիրառմամբ իրականացված շինարարական պատրաստվածքների համար ջերմատեխնիկական հետազոտությունների արդիական մեթոդների ուսումնագործնական ձեռնարկի մշակում,

- Որպես կատարված աշխատանքների վերջնարդյունք, վերը նշված ուսումնագործնական լաբորատոր հետազոտությունների մեթոդների 3 ձեռնարկների կազմում, խմբագրում և տպագրություն ,
- Պայմանագրային ողջ ժամկետում ընթացիկ աշխատանքների վերաբերյալ աշխատանքային խմբի անդամների կողմից փուլային (1փուլը =1 ամիս) անհատական հաշվետվությունների ներկայացում փուլի ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:

Խորհրդատվական աշխատանքները պետք է իրականացվեն հետևյալ ժամանակացույցով՝

h/h	Ծախսատեսակը	Ժամանակահատվածը
	Տեղական խորհրդատվություն (նշված մասնագիտությունների գծով նոր լաբորատոր աշխատանքների ձևակերպման, փորձարկման և ուսումնական գործընթացում ներդրման խորհրդատվություն), այդ թվում	01.02.17թ- 30.06.17թ.
1	խորհրդատու 1 (Բնական ու արհեստական քարանյութեր)	01.02.17թ- 30.06.17թ.
2	խորհրդատու 2 (Բետոնների ու շաղախների լցանյութեր և հավելանյութեր)	01.02.17թ- 30.06.17թ.
3	խորհրդատու 3 (Անօրգանական ու օրգանական կապակցանյութեր)	01.02.17թ- 30.06.17թ.
4	խորհրդատու 4 (Մետաղների, փայտանյութերի ու նրանց կիրառմամբ ստացված պատրաստվածքներ)	01.02.17թ- 30.06.17թ.
5	խորհրդատու 5 (Համաշինարարական և հատուկ բետոններ ու շաղախներ)	01.02.17թ- 30.06.17թ.
6	խորհրդատու 6 (Կերամիկական, ապակե, ձուլվածքային ու պոլիմերային հենքով շինարարական նյութեր)	01.02.17թ- 30.06.17թ.

Թեկնածուներին ներկայացվող նվազագույն պահանջներն են.

1. ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ (30 միավոր)

- Բարձրագույն կրթություն (ցանկալի է գիտական աստիճան) բնագիտական ոլորտում
- Շինարարական նյութերի, պատրաստվածքների և կոնստրուկցիաների արտադրության տեխնոլոգիայի, քիմիկատեխնոլոգիայի ոլորտում բարձրագույն կրթությունը կդիտվի իբրև առավելություն:
- Նշված ոլորտում աշխատանքային փորձ:
- Ռուսերեն և անգլերեն լեզուների իմացություն
- Համակարգչային հմտություններ` Microsoft Word, Excel, Internet:

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ (35 միավոր)

- Վերը նշված ոլորտում փորձարարական աշխատանքի առնվազն 3 տարվա փորձառություն, փորձարարական սարքերի ու տեղակայանքների իմացություն և դրանց վրա աշխատելու հմտություններ:
- Դիտարկումների, ուսումնասիրությունների ու փորձարկումների արդյունքների գնահատման ու դրանց վերաբերյալ տեխնիկական եզրակացությունների, հաշվետվությունների կազմման հմտություններ:
- Բարձրագույն կրթության համակարգում ուսումնական գործընթացի իմացություն:
- Թիմային աշխատանքի, արդյունավետ հաղորդակցման և համագործակցման կարողություն ու փորձառություն:

3. ՀԱՏՈՒԿ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՆԵՐ (35 միավոր)

- Կրթության, գիտահետազոտական ու փորձարարական գործունեության համալիր փորձառություն` դասավանդում, վերլուծական աշխատանքներ, ոլորտի իրավական ակտերի իմացություն, վերապատրաստումներ, նորամուծություններ, մասնակցություն ծրագրերին և այլն (ցանկալի է նաև գործնական ոլորտի կազմակերպությունների հետ համագործակցության փորձառություն):
- Մեթոդաբանական աշխատանքների փորձ:
- Առաջարկությունների կազմման ու ներկայացման փորձ:

Դիմող թեկնածուները դիմումին կից պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

- Ինքնակենսագրական տվյալները (CV), որը պետք է պարունակի դիմողի վերաբերյալ հետևյալ տեղեկությունները` անունը, ազգանունը, ծննդյան թիվը, կրթությունը, մասնագիտությունը, մանրամասն աշխատանքային փորձը,
- Կրթությունը և փորձը հիմնավորող փաստաթղթեր ըստ անհրաժեշտության:

Համապատասխան փորձ ունեցող մասնագետները կարող են դիմել «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» Հիմնադրամ` ք. Երևան, Վ.Տերյան փող. 105 հասցեով, (էլ. փոստ. info@nuaca.am) մինչև <<14>> նոյեմբերի 2016թ., ժամը 13:00-ն:

Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք դիմել վերոհիշյալ հասցեով կամ 58-37-73 հեռախոսահամարով: